է։ Եկեղեցականները նաև զանազան սրբոց մասունքներով շրջում են գիւղէ—գիւղ, քաղաքէ—քաղաք։

Երրորդ տեղն է բռնում կառավարութեան հարստահարութիւնը։ Տասանորդական տուրքը գիւղացիք վճարում են տասին մէկ։ Եւ բոլոր տեսակ տուրքերը միասին հաւաքած ամէն մի գիւղական շնչից պահանջում են մի մէջիտեայ։

Բայց այդ տուրքերը չեն գիւղացոց այնքան վնասողը, որքան տուրք հաւաքողները, որոնք անասելի չարիքներ են գործում գիւղերումը։ Աւելի վատ է լինում, երբ որ կառավարութիւնը տասանորդական տուրքերի երեսը ծախում է կապալառուներին։ (Կապալառուները մեծ մասամբ ընկերութիւն են կազմում խառն հայ և Թուրք դրամատէրներից)։ Գնող շահախնդիր կապալառուն, որքան որ ոյժ ունի ճնշում է գիւղացոց աւելի մեծ արդիւնք ստանալու համար։

Բացառութիւն է կազմում միայն Վարագայ վանքը, որ թէմական նուիրատուութիւնը նոցա ազատ կամքին է թողել։ Ընդհանուր որ յիշեալ վանքը Խրիմեան Հայրիկի հովանաւորութեան տակ, որքան կարողացել է իւր ուսումնարանից տուել է գիւղերին վարժապետներ։ Միւսցեալ ընկերութեան վասպուրականում ունեցած բոլոր ուսումնարանների վարժապետները Վարագայ ուսումնարանի աշակերտներն են։